Արձանագրություն 3

ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03.09.19թ.

ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Արմեն Հակոբջանյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Կ.Սիմոնյան)

1.1 «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Կ.Սիմոնյան)

2.1 «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Ներկայացված 12.02.2018թ Հայաստանի մանուկներ հիմնադրամի հետ կնքված թիվ INFRA/ARCHI-2018 պայմանագիրը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված, քանի որ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող արձանագրությունը չի համապատասխանում պայմանագրով սահմանված ծառայությունների կատարման ժամկետներին և Հավելված 3 ձևանմուշին:

2. 1.2 Ներկայացված 15.06.2018թ Անահիտ Բեգլարյանի հետ կնքված 22-2018 պայմանագիրը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված, քանի որ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող արձանագրությունը չի համապատասխանում պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետներին:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան ս/թ հոկտեմբերի 9-ը, ժամը՝ 12:00 -ն, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ հոկտեմբերի 7-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
	Արմեն Հակոբջանյան /գնահատող/
	Խորեն Մնացականյան /բացող/
	Արմինե Պետրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան

5. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին

(Մ. Աղայանց)

5.1 «Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

5.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ « Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5.4 Ընտրված մասնակցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Կ.Սիմոնյան //նախագահ/

Հ. Հովսեփյան

Ա. Հակոբջանյան

Խ.Մնացականյան

Ա. Ստեփանյան

Ա. Սիմոնյան/քարտուղար/